ՆՈՐ-ԴԱՐ

№ 125 ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ, Ուրբաթ, 23 Յուլիսի

1893

Ուրբաթ, 23 Յուլիսի ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ, № 125

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 րուբլի 50 կոպ.
Թիֆլիսում՝ ամիսը՝ 1 րուբլի, հատով 5 կոպէկ։
Բաժանորդ գրում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն Тифлисъ. Редакція „Норъ-Даръ“
կամ Tiflis. Rédaction „Nor-Dar“

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչեւ 2-ը
Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով։
Յայտարարութիւնների բաժին 2 կոպ., բնկամների համար կրկնապատիկը։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

—

Քրոնիկոն.—Կայսերական տօնի առթիւ, խուրդներին ոչնչացնելու միջոցը։ Խոլերան և երկաթուղիները։ Խմբագրութեան կողմից։ Բաթումից։ Բժ. Գլուացկու Բագու ուղեւորութիւը։ Կարկուտ Կոջորում և Դորու գաւառում։ Երկրաշարժ Թիֆլիսում։ Դիշից։ Լճմիածնից։ Անասունների ցաւը Սառնապոլի նահանգում։ Վերայի կամուրջը։ Խեղդուելու մի դէպք։ Սաղիանից։ Ալէքսանդրապոլից։ Կախ-Աւանից։
Ռուսիայի թերթերից։
Կ. Պոլսի թերթերից։
Խաչատուր Արովեան։
Թղթակցութիւններ.— Սառնապոլի։
Քաղաքական.—Դերմանական կառավարութիւնը և լեհերը։
Քաղաքական լուրեր։
Հեռագիրներ։
Բանասիրական.—Ռուդին։
Տեղեկատուութիւններ։
Յայտարարութիւններ։

ՔՐՈՆԻԿՈՆ

Հինգշաբթի, յուլիսի 22-ին՝ Նորին Կայսերական Մեծութիւն Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆեօդորովնայի և Նորին Բարձրութիւն Մեծ Իշխանուհի Մարիա Ալէքսանդրովնայի անուանակոչութեան օրը Թիֆլիսի հայոց աւագ եկեղեցում մաղթանք կատարուեց։ Նոյնպիսի մաղթանքներ կատարուեցան նաև Սիոնի եկեղեցում և ուրիշ դաւանութիւնների աղօթատներում։ Քաղաքը զարդարած էր դրօշակներով և երեկոյեան լուսաւորած։

—

Հաղորդել էինք, որ դաշտային բոյսերի թշնամի խլուրդներին ոչնչացնելու համար թոյն էին բերել տուել, որը խլուրդների մէջ սիփ առաջացնելով, կոտորում է նրանց առանց մարդկանց վնաս տալու։ Սակայն նախ քան այդ թոյնի գործածելը նպատակայարմար էր դասած դեռ քննութեան ենթարկել և այդ գործը յանձնուած էր Կովկասի վիճաբանական շրջանի լաբորատորիային։

Այժմ «Кав.»-ը հաղորդում է, որ այդ թոյնի գործածութիւնը լիովին նպատակայարմար է և մարդկանց անվնաս։

—

Պետերբուրգից արքունի երկաթուղիների վարչութիւնը Կովկասի երկաթուղիների վարչութեանը յայտնել է, որ ճանապարհների հաղորդակցութեան մինիստրը թոյլ է տուել խոլերա երեւալու դէպքում անմիջապէս ձեռնարկել ի կատար ածելու այն միջոցները, որ հրատարակուած են 1892 թ. յուլիսի 27-ին։

—

Շատերը ուղարկելով մեզ իրենց յօդուածները կամ թղթակցութիւնները, խնդրում են հրատարակել խոստանալով չարունակութիւնը յետոյ ուղարկել։ Հարկաւոր ենք համարում յայտնել, որ այդպիսի յօդուածներն ու թղթակցութիւնները կըմնան խմբագրութեան մէջ՝ մինչև որ չարունակութիւնն ստացուի։ Ուստի այն պարոնները, որ մինչև այժմ կեսատ յօդուածներ են ուղարկել, չպէտք է սպասեն, որ դրանք լոյս տեսնեն։ Մինչև յօդուածը վերջացած չլինի, տպագրութեան չի յանձնուիլ։

—

ԲԱԹՈՒՄԻՑ.—մեզ գրում են, որ այնտեղ պատրաստութիւն են տեսնում Վեհ. Հայրապետին ընդառաջելու։ Յանկալի էր, որ այդ ընդունելութեան համար կարևոր պատրաստութիւններ տեսնուէին վաղօրօք, որովհետև Բաթումը Կովկասի նախադուռն է և Թիֆլիսի առաջնակարգ քաղաքին է պատկանում։ Ասում են, որ Կովկասի զանազան կողմերից պատգամաւորութիւններ են գնալու Բաթում Վեհափառին բարի գալուստ մաղթելու և խնդիրներ տալու։

—

Կովկասի բժշկական բաժնի կառավարիչ բժ. Գլուացկին Բագու է ուղեւորում այնտեղ երևան եկած խոլերայական հիւանդութեան ընթացքը նախնելու համար։

—

Կոջորում յուլիսի 17-ին և 18-ին կարկուտ է տեղացել և ցանքերին վնասել։ 17-ին բաւական մեծ կարկուտ է տեղացել նաև Դորու գաւառում և այդիներին վնասել։

—

Յուլիսի 20-ին, երեքշաբթի երեկոյեան ժամը 10-ից 50 ր[illegible] Թիֆլիսում երկրաշարժ եղաւ, որն աւելի քաղաքիս արևմտեան մասումն էր զգալի։

—

Բագուի յայտնի վաճառական Զ. Թաղիևը իւր հաշուով այդեպանական ուսումնարան է բաց անում Մարդաքեան դիւղում յատկապէս թուրքերի համար և այդ նպատակին 30,000 ր. է յատկացրել։ Այդ մասին արդէն, «Касп.»-ի տեսելով խնդիր է ուղարկուած Պետերբուրգ և յոյս կայ որ 1894 թուին բացուի ուսումնարանը, ուր ի միջի այլոց պիտի հրաւիրուի նաև մի մասնագէտ երկրաբան։

—

ԴԻՇԻՑ.—Մեր գիւղացոց եկամտի մի յայտնի մասը բերդին է պատկանում։ Անցեալները մի այսպիսի դէպք պատահեց։ Բէգի ծառաներից երկուսը գալիս են մի հայի այգի և պահանջում, որ բէգին հասանելի թուքը տան։ Հայը ցոյց է տալիս բէգի բաժին ծառերը, բայց ինքը հրաժարւում է թուքը հաւաքել—թող հաւաքեն, տանեն։ Մտնում է վեհ, կռիւ։ Վերայ է հասնում բէգի որդին և խեղճ այգեպէրին այնքան է ծեծում, որ նա մի քանի օրից վախճանում։ Բէգի տղան բռնուած է և դործը քննիչին է յանձնուած։

—

Շատ գեղեցիկ էր տեղիս խոջաներից մէկի բռնած դիրքը։ Նա օգտուելով հանդամանքից բէգին փող է պարտք տալիս գործի համար և տեղը հող վերցնում։ Դիւղացիները ընդվզմանում են և... էհ, նալաթ ռանչպարի սև օրին։ Ո՞վ է նրան լսողը, մարդատեղ դնողը։ Նա փող չունի խոջային դէմ դնելու և պաշտպանութիւն գտնելու։

Շատ նեղ դրութեան մէջ են դիւղացիները. քանի տարի է երկոյային պատուհասից մեծամեծ վնասներ են կրում։

—

ԷՄԻԱՆՆԻՑ.—Ձմեռանի անցեալ տարուայ չրջանաւարտներից մէկը՝ Բագրատ Վարդազարեան այս ամսիս ընդունուել է միաբան։

Այսպիսով մի նոր միաբան էլ աւելացաւ։

—

Մայիս ամսուայ ընթացքում Սառնապոլի նահանգում տաւարի մէջ երևան եկած ցաւից կոտորուել է 2,789 գլուխ, իսկ 2406 գլուխ էլ սպանել են։

—

Վերայի կամուրջը նորոգութեան է կարօտ. այդ առիթով այժմ խոտհանուած է այդ կամրջով բեռնակիր կառքերի երթևեկութիւնը։

—

Յուլիսի 20-ին Քռում լողանալիս մի վրացի խեղդուեց։ Դիակը չէ գտնուած։

—

ՍԱՂԻԱՆԻՑ.—Անցղուչութեանը գոհ եղաւ այս երկու օրս մի ծերունի՝ սաղիանցի-ուտուա Բանին։ Նա գնացած է լինում ծղոտ (քիւլաչ) հարելու։ Ծխախոտը ծխելիս՝ ինչպէս է լինում, վառւում է ևաև կողմից գետինը. մինչ այս մինչ այն՝ մեծ ծաւալ է սանում հրդէհը. ամեն ճիգ թափում է խեղճը, հանգցնել չի կարողանում. տասիկ յոդնածութիւնից ու ծարաւից յաղթուած ուշաթափ է լինում, ընկնում։ Երկու օր չանցած՝ մեռնում է խեղճը, որը ամեն առաւօտ ու իրիկուն եկեղեցի գնալով՝ չարունակ ամաչեցնում էր այդ գործում ծուլութիւն անող պաշտօնաներին։

Շնորհակալութեամբ յիշատակում ենք այն՝ որ մեր վանքի կաթուղիկէն չինելու համար նուիրել է բագրեւանդ այրի տիկին Թաթոսանցը երեք հարիւր (300) րուբլի։ Փայտայ չինութիւնը վերջանում է արդէն։ Չնայելով դրան՝ վանքի վանահայր Տէր-Գրիգորեանցը, ս. Առաքելոցի նպաստութեամբ, մի ս. մասունք վերցրած, դուրս է եկել կաթուղիկէի չինութեան համար ժողովք անելու։

—

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՈԼԻՑ. — Մեր քաղաքում այս տարի կենսական մթերքները չատ թանգ են, այնպէս որ խեղճ ժողովուրդը հազիւ հազ կարողանում է ձօլա գնալ։ Ալիւրի պուդը 1 ր. 60 կոպ., իւղի պուդ 13 ր., անքաշ պանիրը մօտ 4 ր., չէչիլ պանիրը մօտ 3 ր., ձուի 100-ը 1 ր, և այլն, այնպէս որ ժողովրդի յոյսը մնացել է մինչև ցորենի քաղը. խոտերն և դարու արտերն արդէն քաղում են. այս տարի չատ լաւ են այս կողմի հացաբոյսերը, տարին անձրևային էր. միայն վերջերս սպասում էր մի անձրևի, ցորենները չորանալուց չատ երկիւղ կար։ Անձրևները չատ գալուց յետոյ վերջերս կտրուեցին. ժողովրդի յոյսը նախախնամութեան վրայ էր, ուստի է դիմելու այդպիսի դէպքերում, եթէ ոչ մեր ս. Առաքածածնին (Աօթն-Վիրաց), որի պատկերը թափոր հանեցին. թափորը կատարուեց մի քանի օր առաջ՝ կարծեմ յուլիսի 7-ին։ Թափորից յետոյ փառաւոր անձրև տեղաց։

—Բարեկենդաններից մինչև այժմ մեր

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՌՈՒԴԻՆ *)

(Ի. ՏՈՒՐԳԵՆԵՒԻ)

—

ՎԵՐՋԱԲԱՆ

—

Մի քանի տարի էլ անցաւ։

Աշնային ցուրտ օր էր։ Նահանգական Ս... քաղաքի դլխաւոր հիւրանոցի առաջ կանգ առաւ մի ուղեկառք։ Նրա միջից թեթեակի ձգձգուելով և անքարտքալով դուրս եկաւ, թէև ոչ տարիքաւոր, բայց արդէն բաւական լցուած մի պարոն։ Ատաճաններով դէպի երկրորդ յարկը բարձրանալով, նա կանդնեց լայն միջանցքի դրանը, և ոչ մի մարդ չնկատելով, բարձր ձայնով սենեակ պահանջեց։ Ուր որ էր դրան ձայն լսուեցաւ. ցած վարազոյրների տակից դուրս եկաւ մի բարձրահասակ ազատուր և արագ, կողքի քայլուածքով անցաւ առաջ։ Կիսամութի մէջ փայլում էին նրա փէլերատած կռնակն ու վիր քշտած չորի թևերը։ Ներս մտնելով սենեակ, եկուորն իսկոյն հանեց վերարկուն ու փողպատը, նստեց գահաւորակի վրայ և բռնելը դէմ տալով ծնկներին, նախ նայեց չուրջը—որպէս թէ քննատ լինէր, յետոյ հրամայեց որ կանչեն իւր ծառային։ Սպասաւորը խոնարհու չարժուածքով դուրս պրծաւ սենեակից։ Նորեկը Լաժնեն էր։ Զինուորական ոճով հագած էր նա քաղաքացու հագուստ։ Նրա ամբողջ էութիւնը, երբեմն զանգուածուտ և երբեմն անկասկած ուժգին չարժուածքը, սառած, կարծես ջարդուած խոսակցութիւնն արտայայտում էին վերջնական թալկութիւն, ծածուկ և խայտաղ վիշտ, բոլորովին տարբեր այն կիսակենդ տրխրութիւնից, որ երբեմն զործադրում էր նա, ինչպէս և առհասարակ երիտասարդութիւնն է զործ ածում, տարբեր այն տխրութիւնից, որ լի է յուսով և պիւրահաւան ինքնասիրութեամբ։

—Բոլորը, ինչ որ պատահել է պատմեմ, ասաց նա։—Բոլորը կարելի չէ և կարիք էլ չկայ պատմելու... Ես չատ մեռ եկայ. և լոկ մարմնով չէ, որ թափառեցի—այլ և հոգով. ինչ բանից և ումնից ասես չեմ մօտեցել։ Այո, ում ասես, կրկնեց Ռուդինը նայտելով, որ Լաժնեն առանձին համակրութեամբ էր նայում իրեն.—Քանի՛ քանի անգամ նոյն իսկ իմ խօսքերս աւելի են զարձել ինձ—ոչ միայն իմ բերանում, այլ և նրանց, որոնք գաղափարակից էին ինձ։ Քանի՛ քանիցս տպայական բարկացկոտութիւնից՝ ձիու բոթի անզգայութեան եմ հասել, ձիու՝ որ արդէն մինչև իսկ պոչը չէ չարժում մարակի հարուածների տակ... Քանի՛ քանիցս ուրախացել եմ, յուսացել, թրչնամացել և ատրացել ի զուր տեղը։ Քանի՛ քանիցս, սառնել զնացել եմ բազէի նման և, խոյին չախչախուած խնունջի պէս, սոզալով վերադարձել... Ո՛ւր ասես եղած չեմ. ճանապարհ չէ

*) Տես «Նոր-Դար»-ի № 124.

բաժողովը նրան ստիպել էր փիւղը Թողնել ու Ս*** գալ։

Ներս մտաւ Լաժնեի ծառան։ Դա մի երիտասարդ, գանգրահեր և կարմրաթուշ տղայ էր, մոխրագոյն վերարկուն հագին, վրայից կապոյտ գօտի կապած և ոտին էլ փափուկ, քէչայէ կօշիկ։

—Ա՛յ, տեսնում ես հասանք, ասաց Լաժնեը.—իսկ դու վախենում էիր, որ հենց այն է, անուի դողը դուրս է թռչելու։

—Հասանք, այո, պատասխանեց ծառան, աչքիատակով ժպտալ՝ վերարկուի բարձրացրած օձիքի արանքից.—բայց թէ ինչի չդուրս եկաւ դողը...։

—Ոչ ոք չկայ այստեղ, յանկարծ լռութեան միջանցքում։

Լաժնեը ցնցուեց և սկսեց ականջ դնել։

—Հէյ, ով կայ այստեղ, կրկնեց ձայնը։

Լաժնեը վեր կացաւ, մօտեցաւ և աթոռակով բաց արեց դուռը։

Նրա առաջ կանգնած էր բարձրահասակ, համարեա բոլորովին ասլիտակած, կուզը դուրս եկած, հին, թաւչեայ, սակեպղնձէ կոճակներով թիկնոցով մինչ։

Լաժնեն իսկոյն ճանաչեց նրան։

—Ռուդին, կանչից նա յանդուգն։

Ռուդինը չուռ եկաւ։ Նա չէր կարողանում լաւ դիտել Լաժնեի դէմքը՝ մէջքը լոյսին դարձրած լինելուն համար, և տարակուսած նայում էր նրան։

—Ինձ չէք ճանաչում, խօսեց Լաժնեը։

—Միխայլո Միխայլըչ, բացականչեց Ռուդինը և մեկնեց ձեռքը, բայց չիմանալով ինչ անել, ետ քաշել...։

Լաժնեը երկու ձեռքով չտապով բռնեց նրա ձեռքը։

—Եկէք, եկէք ներս, ասաց նա Ռուդինին և ներս մտցրեց իւր սենեակը։

—Ինչպէս փոխուել էք, ակամայ ձայնը ցածացնելով ասաց Լաժնեը մի վոքը լուելուց յետոյ։

—Այո, ասում են, պատասխանեց Ռուդինը աչքերը սենեակի մէջ թափառելով։—Տարիք...։ Բայց դուք ասա, էլի այն էք...։ Ինչպէս է Ալէքսանդրա... Ձեր կողակցի առողջութի՞ւնը։

—Փառք Աստուծու, լաւ է։ Բայց ձեր խաչին էք այս կողմերն ընկել։

—Ե՛ս. դա երկար պատմութիւն է։ Բայց իսկապէս ես պատահաբար ընկայ այստեղ։ Մի ծանօթիս էի պատում։ Սակայն չատ ուրախ եմ...։

—Ո՞ւր պիտի ճաշէք։

—Ե՛ս։ Չգիտեմ։ Երևի մի որ և է պանդոկում։ Ես այսօր և ևթ պարտական եմ այստեղից հեռանալու։

—Պարտական էք։

Ռուդինը խորհրդաւոր կերպով ժպտաց։

—Այո, պարտական եմ։ Ինձ իմ գիւղն են աքսորում։

—Ձայնեցէք ինձ հետ։

Ռուդինն առաջին անգամ ուղիղ նայեց Լաժնեի աչքերին։

—Ինձ հրաւիրում էք ձեզ հետ ճաշելու, ասաց նա։

—Այո, Ռուդին, ինչպէս երբեմն էր, ընկերաբար։ Ուզում էր։ Երբէք չէի սպասում, որ ձեզ պատահեմ։ Եւ Աստուած գիտէ, թէ մեկ էլ երբ ենք տեսնուելու։ Այսպէս լաւ կարելի չէ բաժանուել միմեանցից։

—Համեցէք, ես համաձայն եմ։

Լաժնեը սեղմեց Ռուդինի ձեռը, կանչեց ծառային, ճաշ ապատրաստ և հրամայեց, որ մի շիշ չամպայն դնեն սառցի մէջ։

—

Ամբողջ ճաշին, խօսք մէկ արած պէս, Լաժնեն ու Ռուդինը երկուսն էլ իրենց ուսանողական կեանքից էին խօսում. չիշում էին չատ բաներ և չատերին՝ թէ մեռած և թէ կենդանիներից։ Ռուդինը նոյն կարծես ակամայից էր խօսում, բայց մի քանի բաժակ խմելուց յետոյ նրա արիւնը չարժ եկաւ։ Վերջապէս սպասաւորը վերջի անգամն էլ տարաւ դուրս. Լաժնեը վեր կացաւ, փակեց դուռը և կրկին վերադառնալով՝ նստաւ ուղղակի Ռուդինի դէմը։ Եդ կղակը կամայակ դէմ տուաւ ձեռքերին։

—Դէ, այժմ արդէն, ասաց նա—պատմեցէք ինձ ամենը, ինչ որ ինձանից բաժանուելուց յետոյ պատահել է ձեզ։

Ռուդինը Լաժնեին նայեց։

«Աստուած իմ, մտածեց Լաժնեը,—ինչպէս փոխուել է. խղճալի։

Ռուդինի գծագրութիւնը չատ փիչ էր փոխուել. մանաւանդ այն օրից, երբ իշխանում պատահեցանք նրան, թէև մտածող ծերութիւնն արդէն նրա վրայ դրոշմել էր իւր կնիքը. բայց բոլորովին փոխուել էր նրանց արտայայտութիւնը։ Այլապէս էին նայում նրա աչքերը. ամբողջ էութիւնը, երբեմն զանգուածուտ և երբեմն անկասկած - ուժգին չարժուածքը, սառած, կարծես ջարդուած խոսակցութիւնն արտայայտում էին վերջնական թալկութիւն, ծածուկ և խայտաղ վիշտ, բոլորովին տարբեր այն կիսակենդ տրխրութիւնից, որ երբեմն զործադրում էր նա, ինչպէս և առհասարակ երիտասարդութիւնն է զործ ածում, տարբեր այն տխրութիւնից, որ լի է յուսով և պիւրահաւան ինքնասիրութեամբ։

—Բոլորը, ինչ որ պատահել է պատմեմ, ասաց նա։—Բոլորը կարելի չէ և կարիք էլ չկայ պատմելու... Ես չատ մեռ եկայ. և լոկ մարմնով չէ, որ թափառեցի—այլ և հոգով. ինչ բանից և ումնից ասես չեմ մօտեցել։ Այո, ում ասես, կրկնեց Ռուդինը նայտելով, որ Լաժնեն առանձին համակրութեամբ էր նայում իրեն.—Քանի՛ քանի անգամ նոյն իսկ իմ խօսքերս աւելի են զարձել ինձ—ոչ միայն իմ բերանում, այլ և նրանց, որոնք գաղափարակից էին ինձ։ Քանի՛ քանիցս տպայական բարկացկոտութիւնից՝ ձիու բոթի անզգայութեան եմ հասել, ձիու՝ որ արդէն մինչև իսկ պոչը չէ չարժում մարակի հարուածների տակ... Քանի՛ քանիցս ուրախացել եմ, յուսացել, թրչնամացել և ատրացել ի զուր տեղը։ Քանի՛ քանիցս, սառնել զնացել եմ բազէի նման և, խոյին չախչախուած խնունջի պէս, սոզալով վերադարձել... Ո՛ւր ասես եղած չեմ. ճանապարհ չէ

ՄՈՍԿՎԱՅԻ ԹՈՒՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

— Հետևյալ տուրքերը վճարվում են 50 տոկոսով ավելացրած. 18-ը կոպեկը տասնորդական կշռի համար, 20 տա և կոպեկը ձիավոր տուրքի համար, որպէս նաև ամեն տեսակ ապրանքների համար, որոնք ներմուծվում են Ռուսաստան ցամաքային սահմանագծերի վրայով:

— Ռուսաստանի ներսում ապրանքների փոխադրության համար ուղարկվող ամեն տեսակ ապրանքների համար, որոնք ներմուծվում են Ռուսաստան ցամաքային սահմանագծերի վրայով, ինչպես նաև ներմուծվող ապրանքների համար, որոնք ուղարկվում են Ռուսաստանի ներսում ապրանքների փոխադրության համար, ներկայումս գործ ունեցող տուրքերը ավելացվում են 50 տոկոս

կանապէս վճռից չինել երկաթուղու կայարանը վերոյիշեալ տեղում։

Իրաւասու բժիշկ Սոկոլովը յայտարարեց երկաթուղու կայարանի չինելը Խոլոդնիյ-Ռադնիկում, որովհետև այնտեղ մօտ է քաղաքի կեդրոնին և բացի դրանից չատ ջուր կայ։ Միւսները զբաղան այդ տեղը անյարմար, որովհետև ռօճավաճառի հրապարակից մօտ 5 վ. է, քանի որ ցորենը բերում են քաղաքի հարաւ-արևելեան կողմի գիւղերից, հետևապէս դժուար կլինի հարիւրաւոր սայլերի քաղաքի միջից անցկացնելը, որովհետև ուրիշ ճանապարհ չկայ։ Իրաւասու Եղոկիմովը խօսեց յօգուտ ռօճավաճառի հրապարակի՝ հիմնուելով նրա վրայ, որ կայարանը Խոլոդնիյ-Ռադնիկի մօտ չինելով մենք կարող ենք մնասել ազբիւրներին, որոնք ապագայում քաղաքին ջուր պէտք է մատակարարեն, քանի որ այժմեան ազբիւրը՝ Կարաբինը քանի գնում ցամաքում է։ Տիմոֆիևը յարմար համարեց լուծել այդ հարցը գաղտնի քուէարկութեամբ, որը և ընդունուեց։ 31 ձայնով ընդդէմ 20-ի ընտրեցին Խոլոդնիյ-Ռադնիկը։

Վաճառականութիւնը յաղթութիւնը տարաւ։ Կայարանը չինելով վերոյիշեալ տեղում վերջը պէտք է զղջան, որովհետև խօսք է պատում, թէ Ցարիցինում մտածում են երկաթուղի չինել մինչև Սաւրոպոլ, որպէս զի Կովկասը ուղիղ հաղորդակցութիւն ունենայ Ռուսիայի հետ։ այն ժամանակ Ռոստովը կարող է ընկնել, ինչպէս այժմեան երկաթուղով ընկնում է Ալմաւիրը։ Ցարիցինի ճանապարհը ուղիղ ընկնում է ռօճավաճառի վրայով, իսկ պատյտը մինչև Խոլոդնիյ-Ռադնիկ է 15 վերստ։

Ինչպէս որ պ. Սոկոլովը ասաց թէ՝ ինչպէս ամեն մէկի չապիկը իր մարմնին մօտ է, այնպէս էլ իւրաքանչիւր ոք իր մասին է մտածում։ Շուտով գալու է գլխաւոր ինժիները. գուցէ այս որոշումը բանդուի, որի մասին իր ժամանակին կըհաղորդենք։

Պօղոս Պապայեանց

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԼԵՀԵՐԸ.

—

Գերմանիայում լհական տարրը միչև այժմ համարուել է պետութեան պնդակազմութեան վնասակար մի մարմին, որին հարկաւոր է ճնշել, ամեն ելուացի թէ անիրաւ միջոցներով սպանել։ Եւ այդ քաղաքականութիւնը Գերմանիայում գործ էր դրւում լհացիների վերաբերմամբ անողոք խստութեամբ և դաժանութեամբ։ Ամենայն բան, որ լհական էր՝ ենթարկւում էր հալածանքի. հալածուած էր լհացու լեզուն, լհացու կրօնը ճնշուած էր, լհացու ուսումնարանն ամենախիստ հսկողութեան ենթարկուած։ Նոյն իսկ լհացու բնակարանը, բնակած հողը ապահովապէս իրեն չէր պատկանում—կառավարութիւնը ոչ մի առիթ չէր բաց թողնում Լհհաստանի գերմանական մասում Պոզնանում հողեր գնելու և այդ հողերի վրայ գերմանացի գաղթականներ բնակեցնելու։

Բնականաբար լհացիներն էլ հաչտ աչքով չպիտի նայէին գերմանական կառավարութեանը, որը նրանց ներկայացնում էր ոչ միայն ազգի, ժողովրդի ամենաբնական, ամենատարրական իրաւունքների պաշտպան, այլ հալածող։ Իսկ լհացին, ունզարացու նման, չատ նախանձախնդիր է իր հայրենիքի, իր ազգային չահերին. նա ամեն բան կընէրէ, բայց թշնամանք ազգային պատուին, ազգային լեզուին—երբէք։

Ահա թէ ինչու մինչև այժմ գերմանական պատգամաւորների ժողովի մէջ էլ մենք լհացի պատգամաւորներին միչտ սովոր ենք եղել կառավարութեան դիմադիր կուսակցութեան մէջ տեսնելու. կառավարութիւնը կարող էր մինչև իսկ սոցիալիստ պատգամաւորներից օգնութիւն ակնկալել, բայց լհացիներից—երբէք, կամ չատ հազիւ։

Բայց, ինչպէս երևում է, իրերի դրութիւնը բոլորովին փոխուել է՝—մինչ գերմանացիները միմեանց հետ ասպատիկ կռիւ են մղում, միևնոյն կուսակցութեան մարդիկ բաժանւում են, միմեանց դէմ կռւում, թէ ազատախոհ և թէ կեդրոնի կուսակցութեան մէջ պառակտումն է ընկնում կառավարութեան կողմից առաջարկուած զինուորադիծն ընդունելու կամ մերժելու մասին, լհացիները չանկարծ կառավարութեան կողմն են պահում, յօգուտ նրան տալիս են իրենց 17 ձայնը և հենց այդ ձայներով էլ ընդունւում է զինուորական օրինագիծը։

Ի՞նչ եղաւ, ինչ պատահեց. միթէ լհացիները չանկարծ ընդհանուր պատութեան, միացեալ Գերմանիայի չահերն իրենց ազգային չահերին համանիշ ճանաչեցին, կամ գուցէ իրենց վաղուցուայ ակնկալութիւններից, ազգային անկախութիւն ձեռք բերելու հեռաւոր նպատակը բոլորովին աչքաթող արին։

Այդ երևոյթը մասամբ բացատրւում է վերջերքս լրագիրների մէջ տարածուած լուրերով, թէ գերմանական կառավարութիւնը լհացիներին խոստացել է Պոզնանի ուսումնարաններում լհական լեզուն գլխաւոր առարկաների չարքն անցկացնել։

Եթէ դա ճչմարիտ է, այն ժամանակ լհացիները ոչ միայն ոչինչ չեն կորցնում, այլ ընհակառակը ձեռք են բերում այդ թանկագին իրաւունքը՝—իրենց զաւակներին իրենց մայրենի լեզուով կրթելու իրաւունքը։ Նրանք վերջապէս կարողացան հասնել երկար տարիներից վեր անողոք մաքառման նպատակ դարձած ձգտումներից մէկին, թէ դրա համար հարկաւոր եղաւ յանձն առնել զինուորական նոր օրինագծով իրենց վրայ բարձրող աւելորդ ծանրութիւնը։

Սակայն պէտք է նկատել, որ իշ. Բիսմարկի՝ կառավարութեան դեկավարութիւնից հեռանալուց յետոյ մի նոր ուղղութիւն մտաւ գերմանական կառավարչական կազմի մէջ, որին հոգի ներչնչողն ինքը Վիլհելմ II կայսրն է, որ երիտասարդական աչխուժով դիմում է իր մի անգամ որոշած նպատակին։ Թէև ճչմարիտ է, իշ. Բիսմարկի հեռանալով Գերմանիան կորցրեց իր նախկին ազդեցութիւնը ընդհանուր պետութիւնների, միջազգային յարաբերութիւնների մէջ, դր. Կալրիւին մի փոքրիկ թզուկ է երևում իշ. Բիսմարկից յետոյ և գերմանացիներն էլ իրաւունք ունին կասկածելու նոր ուղղութեան կայունութեան մասին, քանի որ հինը դեռ բոլորովին չէ անհետացել և նորն էլ դեռ ևս հաստատ, որոշ բնաւորութիւն չէ ստացել, բայց և այնպէս Վիլհելմ կայսրը մի քանի էական խնդիրներում միջամտելով ցոյց տուեց, որ նոր մտքերը, նոր ժամանակից հողին օտար չէ իրենից։ Բաւական է յիչել բանուորական բազմակնճիռ խնդիրը լուծելու համար իր նախաձեռնութեամբ կազմած համագումարը, որ ապահովին քայլ առաջ անել էր նչանակում սոցիալական խնդրի խաղաղ ճանապարհով վճռուելու գործի համար։ Իսկ ուսումնարանական ներկայ կազմակերպութիւնն ու դաստիարակման ղանակն ու բովանդակութիւնը բարեփոխութեան ենթարկելու համար ժողոված համագումարի առիթ խօսած ճառերի մէջ երևացին նրա լուսաւոր, մարդասէր հայեացքները, հին, սխոլաստիկական ուղղը թէլնը վերացնելու համարձակ միտքը։

Սրանք այնպիսի խոչոր դէպքեր էին, որ ոչ միայն գերմանական, այլ և հաւասարիսային նչանակութիւն ունին։

Այդ խնդիրների կարգը պէտք է դասել նաև լհացիների ազգային լեզուին տրուած արտօնութիւնների խնդիրը, որ պատահական երևոյթ չէ կարելի համարել։ Շատ կարելի է, որ եթէ գինուորական նոր օրինագծի խնդիրը չլինէր մէջ տեղ, լհացիները դեռ տարիներ ստիպուած պիտի կռուէին մայրենի լեզուով խօսելու, իրենց զաւակներին մայրենի լեզուով կրթելու իրաւունքը ձեռք բերելու համար, բայց որ այդ բանը վաղ թէ ուշ պիտի պլուխ գար, այդ երևում էր Վիլհելմ կայսրի դէպի լհացիները բռնած դիրքից։ Անցեալները օրինակ Վիլհելմ կայսրը Հռոմում եղած միջոցին մօտեցել էր կարդինալ Լեդոխովսկուն և նրա հետ քաղցր զրոյց արել ի վերջոյ հարցնելով՝ «ամեն ինչ մոռացուած է, այնպէս չէ»։

Այդ հարցման իմաստը հասկանալու համար հարկաւոր է յիչել, որ կարդինալ Լեդոխովսկին լհացի է, հետևաբար և լհական հայրենասէր, որի համար կաթոլիկութիւնն ու հայրենիքի անկախութիւնը համազօր նչանակութիւն են ստացել։ Նա Պոզնանի առաջնորդ եղած միջոցին ամենայն հնարաւոր միջոցներով կռւում էր իր հայրենիքը և հայրենակիցներին գերմանացնելու համար եղած ձգտումների դէմ. և հենց այդ պատճառով էլ, որպէս գերմանական պետական չահերին վնասակար մարդ՝ պատուեց և երկրից աքսորուեց։ Իսկ Վիլհելմ կայսրը երբան հարցնում էր, «ամեն բան մոռացուած է, այնպէս չէ», որ համազօր էր ներողութեան, թէև Լեդոխովսկուն աքսորողն ինքը չէր, այլ իր պաշտօնը։ Այդ դէպքն արդէն մի տեսակ գինադադար էր, մի տեսակ հաչտութիւն էր լհացի հայրենասէրների վերաբերմամբ, իսկ կատարեալ հաչտութեան երկրորդ քայլն եղաւ կարդինալ Ստաբլևսկուն, որ նոյնպէս յայտնի է իր լհական ազգային ձգտումներով, Պոզնանի արքեպիսկոպոս նչանակելը, որ չատ գերմանացի հայրենասէրների, մանաւանդ հին ռեժիմի պաշտպանների քմքովը չէր բոլորովին։

Սակայն միայն այս դէպքերը չէին, որ առիթ էին տալիս մտածելու, որ գերմանական կառավարութիւնը լհացիների վերաբերմամբ բռնած դիրքն ուղում է փոխել։ Անցեալներն օրինակ Վիլհելմ կայսրը Պոզնան եղած միջոցին թէ ճաչի և թէ երեկոյեան ընդունելութեան ժամանակ համարեա թէ բացառապէս լհացիներով էր շրջապատուած և սեղանի վրայ էլ իր կողքին նստացրել էր լհացի-կաթոլիկ առաջնորդ Ստաբլևսկուն, մինչդեռ Պոզնանի գերմանացի-բողոքական առաջնորդը մինչև անգամ ներկայ չէր ճաչին։

Իսկ այժմ գերմանական Լհհաստանի ուսումնարաններում լհական լեզուի դործածութիւնը վերև յիչուած ուղղութեան լոգիական հետևանքն է, չբռնակութիւնը։ Երևի դրան կըհետևին նորանոր զիջողութիւններ գերմանական կառավարութեան կողմից, առանց որոնց անկարելի է լհացիներին կապած պահել կառավարութեան կուսակցութեան հետ։ Լհացիներն եթէ այսօր հաչտ աչքով են նայում գերմանական կառավարութեան վրայ, այդ միայն իրենց ազգային չահերի տեսակէտից էր, ինչպէս և գիմադիր կուսակցութիւն էին կազմում դարձեալ նոյն չահերի տեսակէտից։ Եթէ էգուց կառավարութիւնը մտածէ իր բռնած հաչտեցուցիչ ընթացքը փոխել—անչուչտ նրա հետ կապուած չեն մնալ լհացիները։

Ահա հենց այդ տեսակէտից է, որ իշ. Բիսմարկն ընդունելով Բրաունչվայգից եկած երկու հազար քաղաքացիներին, ասաց, թէ «զարմանալի անզգուխիւն ունի մեր ներկայ մինիստրութիւնն այնպիսի մարդկանց սրտերում, որոնց մէջ առաջները դժուար էր առանձին համակրութիւն գտնել դէպի գերմանական միութիւնը։ Մեր լհացի հայրենակիցները կառավարութեան հաստատուն յենարանն են դարձել—որ դեռ մեր դարում չղած մի վաստ է։ Բայց ես կասկածում եմ, որ լհացիների տածած համակրութիւնը դէպի գերմանական կառավարութիւնն երկար տևէ, գոնէ լհական դաղափարների պահպանողներն ու կրողները՝ լհական ազնուականութիւնն ու հոգևորականութիւնն անկասկած չուտով կըվոխեն իրենց վարմունքը»։

Ի. Բիսմարկը մենակ չէ իր այս կարծիքներով. Գերմանիայի մեծ մասը դրան համակարծիք է։ Գերմանական հասարակութիւնը, որ վաղուց սովոր է լհացիներին համարել բողոքականութեան, գերմանականութեան թշնամի, այժմ աւելի ևս կասկածանքով է վերաբերւում դէպի լհացիների վարմունքը. նոյն իսկ ազգային-ազատախոհների ելքան «Nation. Zeit.» թերթը, որ միչտ կառավարութեան ընթացքին համակրող է եղել, նա էլ նկատում է, թէ «լհացիներն իրենց սեպհական օգուտներն են մտածում» ի նկատի ունենալով Գերմանիայի և Ռուսիայի միջև ծագելիք պատերազմը»։

Անկասկած լհացիները քուէ տալով գերմանական զինուորական օրինագծի օգտին՝ ի նկատի ունէին, որ կառավարութիւնն իրենց պիշտումն է անելու, բայց աւելի ևս անկասկած է, որ առաւել բարձր քաղաքական հայեցակէտով Գերմանիայի զօրանալն աւելի ձեռնտու է լհական չահերին, քան թոյլ լինելն ու պատերազմ ծագելուց պարտութիւն կրելը։

Մ. Մ.

—

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒԻՐՆԵՐ

—

—Գլադստոնը անգլիական պատգամաւորների ժողովին առաջարկել է ընդունել նաև մի լրացուցիչ յօդուած իրլանդական խնդրի վերաբերմամբ, որով Իրլանդիան 6 տարի չարունակ իր եկամուտի $^1/_3$ մասը կըյանձնի պետական գանձարանին, որը պէտք է գործածուի ընդհանուր պետական ծախսերի համար։

—Պամիրի խնդիրը համաձայնութեամբ լուծելու համար Անգլիայի և Ռուսիայի միջև բանակցութիւնները չարունակւում են։ Այն լուրերը, թէ Ռուսիան առանձին արշաւախմբեր է ուղարկել Պամիր, հերքւում են։

—Հռոմի պապը մի էնցիկլիկ (շրջաբերական) է պատրաստում իր յորելեանի առթիւ, որի մէջ պիտի չօշափուի նաև պապութեան դրութիւնը։

—Վատիկանում խօսւում է, որպէս թէ Թիւրքիան մօտերքս փորձել է գաղտնի բանակցութիւն սկսել պապի հետ դաչն կապելու համար, որով պէտք է կանոնաւորուելին Թիւրքիայում եղած քրիստոնեաներին վերաբերեալ խնդիրները։ Սակայն պապը հրաժարուել է, չցանկանալով արևելեան քրիստոնեաների վրայ Ֆրանսիայի ունեցած հսկողութիւնը թուլացնել։

—Սիամի թագաժառանգ Ութրին խօսակցով «Sun»-ի թղթակցի հետ յայտնել է, որ Ֆրանսիայի պահանջներն ապօրինի են, քանի որ Սիամի ձեռքում հազած երկրներն աւելի խաղալ կեանք ունին, քան թէ նոյն իսկ Ֆրանսիայի ձեռքին եղածները։

—Անգլիական թերթերը հաղորդում են, որ իբր թէ Ռուսիան Սիամին առաջարկել է իր կղզիներից մէկը տալ իրեն՝ որպէս ռուսական նաւերի կայան։

—Միւնխենից հաղորդում են, որ Օտտոն թագաւորի առողջութիւնը վտանգաւոր դրութեան մէջ է և, եթէ չուտով դէպի լաւ չփոխուի, մահն անխուսափելի է։

—Անգլիները Թիւրքիայի և Սերբիայի սահմանագծի վրայ պատահած անկարգութիւնները առիթ են եղել այդ երկու պետութիւնների սահմանները ճշգրտութեամբ որոշելու մասին՝ համաձայնութիւն գոյացնելով այնպէս անելու, որ ապագայում առիթ չինի անկարգութեան։

—Գերմանական Վիլհելմ կայսրը «Hohenzolern» նաւով յուլիսի 15-ին Գերմանական ծովն է ուղևորուել։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 յունիսի.—Նովոզիբկովի բնակիչ Շեպելևը Ֆրանսիական դեսպանութեան առաջ փորձով ցոյց տուեց իւր հնարած երկաթուղային կալնիչը (տորմոզ), որ տեղն ու տեղը կարող է գնացքը կանգնեցնել։ Ֆրանսիական կառավարութիւնը մտադիր է այդ գիւտը իւր կառավարութեան առաջարկելու։ Այդ գործիքը չուտով գործածուելու է ռուսաց երկաթուղիների վրայ։

Որպէս զի հացահատիկների գինը չիջնի, մտադրութիւն կայ հացահատիկների զրաւականով փոխառութեան չափն բնդարձակել և փոխ տալու կարգը պարզել։

Սկզբունքով վճռուած է Սիբիրի ծբխահարկը հողային և ուրիչ հարկերի վերածել։

ԲԵՐԼԻՆ.—Այսօր կրկայանայ տեղս վաճառականների աւագների խորհուրդը, որպէս զի կազմին կառավարութեան մատուցուելիք առաջարկութիւնը այն ապրանքների համար, որ վաճառականները մինչև յուլիսի 25-ը գնել են Ռուսիայում։ Այդ ապրանքների համար հաւանականօրէն նախկին մաքսագները կըվճարուին։

«Confectionar» թերթը գրում է, որ Ռուսիայից պատուէրներ ստացած վաճառականները մտահոգութեան մէջ են։ Մեծ կորուստներ լինելն անխուսափելի է, եթէ պատրաստուող ապրանքները պատուէր տուողների կողմից մերժուին. ռուսական նոր տրուած պատուէրները անմիջապէս փոխուած են Գերմանիայի համարեա բոլոր գործարաններում էլ։

ՀԱՆՈՒԻՈՆ.—Արտաքին գործերի մինիստրի օգնական Դրէյը պատգամաւորների ժողովում յայտնել է, որ Մեկոնգ գետի վերին մասերի վերաբերմամբ բանակցութիւնները չարունակւում են. ծանր դժուարութիւններ չկան, քանի որ դրա վերաբերմամբ գործադրելի սկզբունքների մասին անգլիական և ֆրանսիական կառավարութիւնների կարծիքներն ընդհանրապէս նման են։ Կոնսսինպանդ կղզուն տիրապետելը պէտք է ենթադրել, որ ժամանակաւոր կարգադրութիւն լինի և կապ ունի Սիամի գետափերը պաչարելու հետ։

ՊԱՐԻԶ.—Լրագիրները հաստատում են, որ Դևէլի և լորդ Դիւֆերինը խորհրդակցելով համաձայնութիւն են կայացրել Ֆրանսիայի նոր կալուածքների և Զինաստանի ու Բիրմանիայի սահմանների միջև չէզոք երկիր հաստատելու համար։ Արձանագրութիւնները այսօր են ստորագրուելու։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 յունիսի.—Մաքսային վարչութիւնը առևտրական մաքսատներին կարգադրել է յուլիսի 20-ից բսկած վերմանական դրօչակով եկող նաւերից վերցնել 1 ր. գալու և 1 ր. գնալու միջոցին։

ՊԱՐԻԶ, 22 յունիսի.—Սիամի դեսպանը Դեէլին յայտնեց, որ իր կառավարութիւնը համաձայն է Ֆրանսիայի պահանջած լրացուցիչ զրաւականը ներկայացնելու։ Ֆրանսիան պահանջում է, որ մինչև սիամցիների Մեկոնգի ձախ ափից հեռանալը զրաւ ձանկռուն գետն ու նաւահանգիստը, բացի դրանից Սիամը պարտաւորւում է այսուհետև զօրք չպահել Բաւատում—Բանգոկ և Սիէմրեակում, նոյնպէս և Մեկոնգի աջ ափին, Կամբոջից 25 կիլո-

մեր հետաւորութեան վրայ գտնուած երկրամաս։ Վերջապէս Սիամի դիւանագրական նաւերին արգելւում է Մեծ լիճը և Մեկոնգ գետը մտնել։ Մինիսարների խորհուրդը որոշեց անմիջապէս գետափի պաշարումը դադարեցնել։

Խմբագիր—հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

«Նոր-Դար»-ի անցեալ ամսոյ 26-էն № 109-ի մէջ Թիւրքիայի Խորջուրից տպուած թղթակցութիւնը 6. տառագրութեամբ՝ չատ անիրաւացի է մեր առաջնորդ Զաքարեանի վերաբերմամբ. գրածը բոլոր զրպարտութիւն է և ոչ մի ճշմարտութեան նշոյլ չկայ։ Ահա 25 տարի է որ մենք նրա հովանաւորութեան տակ ենք ապրում և մենք չատ գոհ ենք նրա գործունէութիւնից։ Սակայն մեր Խորջուրում մի քանի տղաներ կան, որոնք չբաւականանալով խեղճ ժողովրդին իրենց հրամանների տակ ստրուկ դարձնելու ց, կամենում են որ մի առաջնորդ նոյնպէս իրենց հրամանների հլու հպատակ լինի, բայց այդ կողմից ոչ տեսանեն եզիպտոս, մենք Խորջուրում 650 տուն բնակիչ ենք և մենք չատ գոհ ենք մեր առաջնորդից, իսկ այն մարդիկ, որոնք դիմել են Ազգբնանին, որ հեռացնէ նրան և նոր առաջնորդ ուղարկէ, ժողովրդի չատ անհնչան մասն են կազմում։ Այն 17 տունը որ Խորջուրից տեղափոխուել են՝ այլտեղ բնակութիւն հաստատել, դրա պատճառը հողի պակասութիւնն է, որ այժմս էլ չատ զգացւում է, այնպէս որ եթէ մի այլ տեղ աւելորդ հողեր կայ և հողագործութեան յարմար, հարկաւ ժողովուրդը կը դնայ։ Զաքարեանի և նրա անձնաւորութեան մասին մենք աւելորդ ենք համարում գրել, որովհետև թէ նրա գործունէութիւնը և թէ անձնաւորութեան մասին չատ անգամ գրուած է, և մենք բաղդաւոր ենք որ մի այդպիսի հովիւ ունինք և ցանկանում ենք միշտ ունենալ, որով մենք մեր պարտականութիւնը նրա ծառայութեան առաջ կրկատարենք *)։

Սերովբ Քէչիչեան

1893 թ. 3 յուլիս
Թիֆլիս

*) Շատ անհպատ փաստաբանութիւն է հայր Զաքարեանի օգտին. ոչինչ փաստ, ոչինչ համոզիչ կէտ չկայ, իսկ լոկ խօսքերն արժէք չունին։ Խմբ.

Երկաթուղի

Թիֆլիսից Բաթում է գնում մաքդասար № 2 գնացքը առաւօտեան 9 ժ. 30 ր., և Բաթում հասնում է երեկոյեան 9 ժ. 45 ր։

Թիֆլիսից Բաթում է գնում № 4 պոստային գնացքը, երեկոյեան 6 ժ. 50 ր., և Բաթում է հասնում առաւօտեան 8 ժ. 15 րոպէին։

Թիֆլիսից Բագու է գնում պոստային № 3 գնացքը՝ ցերեկը ժամը 1-ից 20 ր. անց։

Բաթումից դուրս է գալիս մարդատար № 1 գնացքը առաւօտեան 9 ժ. 45 ր անց, իսկ *Թիֆլիս* է հասնում երեկոյեան ժամը 9-ից 52 ր. անց։

Բաթումից դուրս է գալիս պոստային № 3 գնացքը գիշերուայ ժամը 11-ից 25 ր. անց, իսկ *Թիֆլիս* է հասնում ցերեկը ժամը 12-ին 25 ր. անց։

Բագուից պոստային № 4 գնացքը դուրս է գալիս գիշերուայ ժամը 11-ից 10 ր. անց և Թիֆլիս է հասնում երեկոյեան ժամը 5-ից 30 ր. անց։

ԱՄԱՐԱՆՈՑԱՅԻՆ ԳՆԱՑՔ

Թիֆլիսից Միխայլով գնում է № 24 գնացքը հինգշ յետոյ ժամը 3-ին։

Միխայլովից Թիֆլիս է գալիս առաւօտեան ժամը 8-ից 10 րոպէ անց։

Թիֆլիսից Գանձակ գնում է № 47 գնացքը երեկոյեան ժամը 9-ից 20 րոպէ անց։

Գանձակից Թիֆլիս է գալիս № 48 գնացքը ցերեկը ժամը 1-ից 30 րոպէ անց։

Պատահարներ

Երեթևեկութիւնը Թիֆլիսի և Վլադիկաւկազի միջև մայիսի 1-ից սկսած մինչև նոյեմբ. 1-ը։

—

ԹԻՖԼԻՍԻՑ դուրս է գալիս

Առաւօտեան ժամը 7-ին՝ հինգ հոգու տեղ ունեցող կարետը. գիշերում է Մլեխում և միւս օրը երեկոյեան ժամը 7-ին հասնում է Վլադիկաւկազ։

Առաւօտեան ժամը 9-ին՝ հինգ հոգու տեղ ունեցող կարետը. գիշերում է Պասանաուր կայարանում և միւս օրը երեկոյեան ժամը 10-ին հասնում է Վլադիկաւկազ։

Երեկոյեան ժամը 3-ին՝ վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուսը). առանց գիշերելու միւս օրը երեկոյեան ժամը 7-ին հասնում է Վլադիկաւկազ։

Երեկոյեան ժամը 5-ին՝ վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը առանց գիշերելու միւս օրը երեկոյեան ժամը 9-ին հասնում է Վլադիկաւկազ։

—

ՎԼԱԴԻԿԱՒԿԱԶԻՑ դուրս է գալիս

Առաւօտեան ժամը 7-ին՝ հինգ հոգու տեղ ունեցող կարետը. գիշերում է Մլեխում և միւս օրը երեկոյեան ժամը 7-ին հասնում է Թիֆլիս։

Առաւօտեան ժամը 9-ին՝ հինգ հոգու տեղ ունեցող կարետը. գիշերում է Գուդաուրում և միւս օրը երեկոյեան ժամը 9-ին հասնում է Թիֆլիս։

Երեկոյեան ժամը 3-ին, վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը. առանց ճանապարհին մի տեղ գիշերելու միւս օրը երեկոյեան ժամը 7-ին հասնում է Թիֆլիս։

Երեկոյեան ժամը 5-ին, վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը. առանց ճանապարհին մի տեղ գիշերելու միւս օրը երեկոյեան ժամը 8½-ին հասնում է Թիֆլիս։

Հրդեհ



Երեթևեկութիւնը մայիսի 8-ից սկսած.

ԱՊՐԱՆՔԱԿԻՐ ՄԱՐԴԱՏԱՐ ԳԻՆ

Բաթումից գնում է ուրբաթ օրերը երեկոյեան ժամը 6-ի և հանդիպում է բոլոր նաւահանգիստները։

Բաթում գալիս է հինգշաբթի օրերը, կէս օրուայ մօտերքը։

Փոթից գնում է Օդեսա՝ ուրբաթ օրերի գործերը վերջացնելուց յետոյ։

Փոթից գնում է Բաթում՝ հինգշաբթի օրերը, առաւօտեան ժամը 9-ին։

Փոթի գալիս է՝ երեքշաբթի օրերը ցերեկը՝ Օդեսայից։

Ապրանքակիր-մարդատար շոգենաւերում ընդունուող II և III կարգի ճանապարհորդները կերակրուելն չեն ստանում։

—

ԲԱԹՈՒՄԻՑ դուրս է գալիս դէպի ՕԴԵՍՍԱ

Շաբաթ օրը՝ լոյս կիսակէս, ժամը 2-ին, շրջանառու ընթացքով մանում է բոլոր նաւահանգիստները։

Կիրակի օրը՝ գիշերուայ 11½-ին, ճանապարհից նաև և մանում է միայն Ե ա լ թ ա և Ս և ա ս տ ո պ ո լ։

Երեքշաբթի օրը՝ գիշերուայ ժամը 2-ին, շրջանառու ընթացքով, մանում է բոլոր նաւահանգիստները։

Հինգշաբթի, ցերեկը ժամը 12-ին, ուղիղ գծով, Նովոռասիյսկի և Կերչի վրայով։

Երկուշաբթի, երեկոյեան ժամը 7-ն, դուրս է գնում դէպի Կ. Պոլիս՝ երկու շաբաթը մի անգամ։

ՕԴԵՍՍԱՑԻՑ գալիս է ԲԱԹՈՒՄ

Ուրբաթ օրերը՝ երեկոյեան, շրջանառու ընթացքով, բոլոր նաւահանգիստներն է մանում։

Ուրբաթ օրերը՝ առաւօտեան, ճանապարհից, Նալչիկ և Սևաստոպոլ հանդիպելով

Երկուշաբթի երեկոյեան, շրջանառու ընթացքով, մանում է բոլոր նաւահանգիստները։

Չորեքշաբթի օրերը՝ առաւօտեան, ուղիղ գծով, Նովոռասիյսկի և Կերչի վրայով։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԻԿ ԲՓԻԹԿ

Յուլիսի 11-ին ԿՈՐՑՐԵԼ է իւր բժշկական *ոսկէ տառերով* արծաթէ շքանշանը։ Ուստի խնդրւում է գտնողներին դիմել Պալովսկու հիւանդանոցը։ Գտնողը վարձատրութիւն կ'ստանայ։

(455) 2—2

ՄԻ ՓՈՐՁՈՒԹԻՒՆ ԵՒ ՀՄՈՒՏ

ՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉ

որ երկար տարիներ վարել է այդ պաշտօնը, յանկանում է միմիայն Թիֆլիսում կամ Նագուում մեր ծնողաց զբաղուելից մինչև տեղ ունենալ չաբաթական 24 դասով և տարեկան 720 րուբլի վարձատրութեամբ։ Մանրամասնութիւնների համար դիմել հետևեալ հասցէով՝ Меблированные номера «Версаль» № 22. г. Тифлисъ.

(451) 10—3.

ԵՐԵԻԱՆՈՒՄ

ՕՐԻՈՐԻ ՄԱՐԻԱՄ ՏՂՐ ՄԱՐՈՒՓԵԱՆՑ առաջիկայ սեպտեմբերից բաց է անում

ԱՐՀԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ,

որի համար իրաւունք ձեռք է բերել Թիֆլիսում։ Դպրատրաստիկ կարուձև է անցնելու։ Ցանկացողները լծող դիմեն սեփական տունը։

(453) 5—3.

ԱՆԴՐԱՌԻԿԱՒԱՅԻ ԵՐԿԱԹՈՒՂԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

սրանով յայտարարում է, որ օգոստոսի 16-ին Միխայլովս կայարանում, առաւօտեան ժամը 10-ին աճուրդով ծախելու են զանազան մեծաւէտ գործածուած իրեր և գործիքներ՝ — լեւեռ, արջ (մալը պըտուտակ, գայկա), կարմէ, փականքներ, թէչնոցներ, դոյլեր, դէյը (բուդուշնը), կարիչներ, նիգեր և այլն, երկաթէ և թուջէ խողովակներ և ջարդ-երկաթ։

(251) 3—2

ՂԱԶԱՆՈՒՄ Գ. Փ. ԼՈԿԿԻՆ

ՏԱԿԱՒԻ ԳՈՐԾԱՐԱՆԸ

առաջարկում է նոր ձեռք չխնայ

ԳԻՆԻ ԵՒ ՑՆԱՆԱԼԻՈՒ ԿԻՍԱՏՈՒԿԱՒՆԵՐ

ՏԱԿԱՒՆԵՐ պատհեստի և գինի վաճառելու համար և ուրիշ ամեն տեսակ ամանեղեն։

Պրէյս-կուրանտներն անմիջապէս ուղարկւում են յանկացողներին։ Հեռագիրների համար հասցէն է

ԼՈԿԿԻՆ, ՂԱԶԱՆ.

10—4.

ՑԱԿՈՐ ՊԱՐՈՆԵՆԻՆ
(Երգիծաբան)

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ

Հրատ. վահան Գ. ՋԱՐԴԱՐԵԱՆԻ.

Դուրսյած հատորի մի մասը արդէն է պատկանում.

Գինն է 5 ղրուշ Ռուսիոյ համար 50 կոպ.։

Վաճառւում է Կ. Պոլսում, Վ. Գ. Զարդարեանի գրավաճառանոց-Քըզլթաշ-վաճառանոցում, իսկ Թիֆլիսում Կինդրոնական գրավաճառանոցում։

(Խմբ.) 20—16.

ԿՊԵՒԼՆԵՐ
ՄԱՏԻԿՈՅԻ ԿԱՊՈՒԼ ԵՒ ՔՆԿ.
(Capsles au Matico)

Պարիզի դեղագործների—Թոյլատրուած է Ռուսիայում։



Սոյն կապսիւլները պատրաստուած են Մատիկօի և Կոպայ Բալզամի էսէնցիայից։ Նրանք պատած լինելով մածուցէ կեղևով ոչ մի վատ համ կամ հոտ չեն ունենում։

Գտնուած Ռուսիայի գլխ. դեղատներում

(M.) 18—14

ՇՈՒՇՈՒԱՅ Ս. «ՄԱՐԻԱՄԵԱՆ»

ՀԱՅ ՕՐԻՈՐԴԱԿԱՆ ԵՐԿՊԱՍԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ համար հրաւիրւում են ուսուցչուհիներ և ուսուցիչներ ամենայն առարկաներից, այսինքն. հայոց լեզուից, ռուսաց լեզուից, թուաբանութիւնից, գծագրութիւնից, վարելչագրութիւնից, երգեցողութիւնից, բնական պատմութիւնից և ձեռագործութիւնից։

Ցանկացողները պէտք է ունենան ուսուցչութիւն անելու իրաւունք (цензъ), կամ մտած լինին Վեհափառ Կաթողիկոսից հաստատուած ընդհանուր ցուցակի մէջ։ Ցանկացողները թող բարեհաճեն գրաւոր խնդիր ներկայացնել ուսումնարանիս վարչութեանը, մանրամասնօրէն յայտնելով իրենց ռոճկի ու մասնագիտական առարկայի մասին և այլ պայմանները. նոյնպէս հարկաւոր է ներկայացնել ուսման վկայագիր և ծառայութեան ցուցակն ամենամօտիկ ժամանակում, որպէս զի հնարաւոր լինի վերջացնել բոլոր պայմանները երկու կողմից էլ և հրաւիրուած ուսուցիչը ներկայ լինի Նուշի մինչև Օգոստոսի 20-ը։

3—1

ԱՋԴ

Բարեյիշատակ ՅՈՎՍԷՓ ԻԶՄԻՐԵԱՆՑԻ կտակին տրամադրութեան համաձայն՝ Սահակ-Մեսրոպեան գրական մրցանակաբաշխութիւնն տեղի պիտի ունենայ յառաջիկայ տարի յուլիս 20-ին Սրբոց Թարգմանչաց Սահակայ և Մեսրոպայ։

Հետևապէս՝ այն ամեն հեղինակք ու բանասէրք որ ազգային գրականութեան և պատմութեան վերաբերեալ որևէ երկասիրութեամբ կը փափաքին մասնակցել այս մրցանակաբաշխութեան, կը հրաւիրուին մինչև յառաջիկայ տարւոյ Յունվարի սկիզբն յուղարկել առ Ամեն. Սրբազան Պատրիարք Հայրն ի Կ. Պոլիս իրենց աշխատասիրութիւնները։

Տալագրեալ երկասիրութիւնք երեք օրինակ պէտք է յուղարկուին. իսկ ձեռագիրք մի օրինակ՝ որք եւս չեն տպուիր։

(կնիք)

Պատրիարքարան Հայոց Կ. Պոլսոյ
№ 754 25 յունիս 1893. 10—3

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՏԵԽՆԻԿՈ-ՔԻՄԻԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ ՖԱԲՐԻԿԱՅԻ

ՊԱՏՐԱՍՏ

«Կապրիզ Նեապ»
«Կապրիզ Նեապ»
»Կապրիզ Նեապ»

,,ԿԱՊՐԻԶ ՕՓԼ-ԿՕԼՕՆ ՆԵԻԱՅԻ'' ՍԱՊՕՆ

ՎԵՐՋԻՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Միւսակ Դուբլի | Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ | Միւսակ Սապօն

ՏԵԽՆԻԿՈ-ՔԻՄԻԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ

,,ԿԱՊՐԻԶ ՆԵԻԱՅԻ'' զանգուածները գերազանցում են բնական յատկութիւններով և պատրաստուած են Զիկադրի համաշխարհահանդէսի համար

ՊԱՀԵՍՏՆԵՐ Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Նէվսկոյի Պատուոյի հրապարակ. 9.
,, ՄՈՍԿՈՒԱ, Նիկոլաևսկայա, տ. Շերեմետևի։
,, ՎԱՐՇԱՒԱ, Նօվիյ Սվեաա, 37. և Գաղութների ամենալաւ մագազիններում։

(M). 50—19

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀՈՒԹԵԻՈՒ ԴՊՐՈՑՈՒՄ

աշակերտների ընդունելութիւնը կըսկսուի օգոստոսի 25-ին և կըշարունակուի մինչև սեպտեմբերի 1-ը։ Ցանկացողները պարտաւոր են իրենց խնդրագրի հետ միասին ներկայացնել ծննդեան և պատուաստի վկայականները։

Թիֆլիսում բնակող անձինք պէտք է ներկայանան իրենց գաւակների հետ, իսկ օտարազգիները պարտաւոր են ցոյց տալ Թիֆլիսում մի անձն, որ կարողանայ իբրև խնամակալ պատասխանատու լինել դպրոցի վարչութեան առաջ։

ԾՆՈՂՆԵՐՈՒ ԵՒ ԽՆԱՄԱԿԱԼՆԵՐԸ պարտաւոր են մինչև սեպտեմբերի 10-ը հոգալ աշակերտի դպրոցական պիտոյքը և հագցնել աշակերտի դպրոցական տարազի հագուստը։ Քաւարները պարտաւոր են ներկայացնել վկայական։ Պատուաւոչները կ'ենթարկուեն բժշկական քննութեան և, եթէ հարկաւոր համարուի, կըմերժուին։

(452) 3—2

BATEAUX A VAPEUR FRANCAIS A. PAQUET ET Cie

ՆԱՒԱՐԿՈՒԱՅՈՒԹԵԱՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

„Ն. ՊԱՔԷ ԵՒ ԸՆԿ.“

Կանոնաւոր և ուղիղ երեթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ չորեքշաբթի օրերը, երկու չաբաթը մի անգամ, յանուարից սկսած և ԲԱԹՈՒՄԻՑ ՄԱՐՍԷԼ։

Բաթումից Մարսէլ գնալիս մանում է Տրապիզոն, Սամսոն և Կ. Պոլիս քաղաքները։

Բաթումից Պարիզ ուղիղ հաղորդակցութեան առմամբ ապրանքները ազատ ղիւմանն ունեն։

Բաթումից մեկնում է՝
Չորեքշ. 28 յուլիսի (9 օգոստ). չոգենաւ «Անատոլիա» կապիտան «Գաբրիէլ» և այդ օրից երկու չաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին կէսօրուայ։

Տեղեկութիւններ ստանալ ցանկացողները թող բարեհաճեն դիմել հետևեալ գործակալներին։

Բաթումում—պ. ՎԻԿՏՈՐ ԴԱՐՆՈՅԻՆ, Նաւերևիժեայ։
Թիֆլիսում—պ. ԲԱԲԿԵՆԴԱՆԵԱՆԻՆ,
Բագուում—պ. Սամուէլ Վիլդարեանին, Կովկասեան Տրապարակ։
Նովոռոսիյսկում—պ. ԼՈՒԻ ՐԻՆՈՅԻՆ։

Չիկարդի յուսահանգէսը գնալ ցանկացողները կարող են ստանալ մանրամասն տեղեկութիւններ թէ ճանապարհի ծախքի և թէ Հաւրից չոգենաւի մեկնելու ժամանակի մասին

(244) 20—10

Լոս. Цензурою Тифлисъ, 22-го Іюля 1893 г. Տպարան և Վ/մատ. Ա. Մելիք-Շահնազարեանցի։ Типо-Лит. А. Меликъ-Шахназаріанца. Воронц. Набережн., д. Григорьянъ Арм. Приход. Школы.